ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> փետրվարի 2024թ. N ՄՈ/119 -Ա

ք. Արմավիր

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՍՄԲԱՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի N01/05.1/980-2023 գրությունը, «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված ստուգման արդյունքում Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից 2023 թվականի նոյեմբերի 27-ին կազմված N121/Դ ստուգման ակտը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի փետրվարի 19-ի N01/11.1/01371-2024 գրությունը և «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2024 թվականի փետրվարի 20-ի թիվ 763 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը, աշխատանքային կարգապահությունը խախտելու համար.

որոշում եմ՝

1. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Սմբատյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-02-23 18:18:25 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ